



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

25 հունվարի 2018 թ. № 11 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՐ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2.4-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի № 1559-Ա որոշման՝ հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Նախարարության) կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև 2018 թվականի մարտի 26-ը Նախարարության աշխատակազմի բյուջետային ֆինանսավորման և ծրագրերի համակարգման վարչություն ներկայացնել 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի գործընթացին նպաստող ծրագրային անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը և սկզբնական հաշվարկները:

2. Նախարարության աշխատակազմի բյուջետային ֆինանսավորման և ծրագրերի համակարգման վարչության պետ Անի Թադևոսյանին՝ Նախարարության 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտը ներկայացնել համապատասխան փաստաթղթերը ստացող պետական մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի № 1559-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցով սահմանված ժամկետներում:

3. Սույն հրամանի կատարման հսկողության իրավասությունը վերապահել Նախարարության աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանին:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ